

ՀԱՆԴԵՍ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ



Գարլա Սերէնա տիկին ճանապարհորդ.

Տիկինն Գարլա Սերէնա բոլոր եւրոպայի մէջ ծանուցեալ նշանաւոր ճանապարհորդ և մատենագիր մ'է, այրի Սերէնայի, որ 1849ին վենետիկոյ Հասարակապետութեան տարագրելոց թըւոյն մէկն էր: Գարլայի մտաց իշխող փափաքն՝ ճանապարհորդութիւն է. ազնուական փափաք մը՝ զոր պէտք չէ չփոթել թափառաշրջիկ ոգւոյն հետ, որ շատ արուեստաւորներ կը մղէ տեղէ մը ուրիշ տեղ, ինչպէս աշնայնի տերևներ հողմոյն ուժգնութէն: Սերէնայի ոգին՝ յստակ արուեստական ոգի մ'է. այլ ինքըն կ'ուզէ որ իր հետադադրութիւնքն միշտ որոշեալ նպատակ մ'ունենան, և ոչ թէ ըլլան դատարկ, երևակերպ, այլ օգտակար, շահաւէտը հասարակաց մշակութեան: Սերէնա տիկինոյ ճանապարհորդութիւնքն, ինչպէս նաև իւր եր-

կասիրութիւնքն, մեծ նպատակ մ'ունին. բաւական է միայն յիշել իւր մատենից ցուցակը և կեանքը:

Անցեալ տարի վենետիկոյ ընդհանուր աշխարհագրական ժողովոյն և հանդիսին ժամանակ, տիկինն զտնուեցաւ այս քաղաքիս մէջ բազում ուսումնականաց հետ, և շատերուն խնդրանքը, երկու կամ երեք անգամ յԱթէնէն վենետիկոյ ճառեր խօսեցաւ, ստորագրելով իւր ճանապարհորդութիւնքը:

Յամին 1881 հոկտեմբերի 16ին մեկնեցաւ յԵւրոպայէ դէպ 'ի Կովկաս, ուսկից դեկտեմբերի 16ին դարձաւ, տարժամելի և լիարկածիւք ճանապարհորդութենէ մը ետքը, զոր ըրեր էր գրելթէ անընդհատ ձիու վրայ՝ կէս վայրենի ցելից, ձեան, կատաղի գազանաց և աւաղակաց մէջ:

ի Կոստանդնուպօլսոյ գնաց 'ի Պաթմա՛մի ապա 'ի Թիֆլիս . և աստի յԱփղազիս և 'ի Սամուրծաքան : Այս ճանապարհորդութեան նպատակն էր , որուն միայն դադափարէն բազում տիկնայք կը ստասանին , ամենակարևոր տեղեաց լուսանկարը հանել , որպէս զի կոպկուս անունով ընդարձակ մասն նին նոր տպագրութեան ծառայէ , որ մերձաւոր ժամանակներս պիտի հրատարակուի 'ի Բարիդ , Այս գործս , որ երկուստասան ստուար հատորներէ կը բաղկանայ , մասամբ մը արդէն տպուցաւ երևելի Շարբանդիէ և Հաչէդ տըպագրապետաց ջանիք , և այժմ դարձեալ 'ի լոյս պիտի ընծայուի 'ի բնէց տեղը հանած 150 լուսանկարովք , արդիւնք տիկնայք :

Գարլա Սերէնա , ութ տարուան մէջ գրեալթէ բոլոր հին աշխարհներն ընթացաւ , որ (ըստ ինքեան չէր ըսուեր , վասն զի այնչափ անգամ խուզարկուած է) դեռ աղէկ չճանչցուած մասեր ունի , կամ թէ գէթ կ'արժեն աւելի սրակնադոյն աչքի տեսողութեան , աւելի հաւատարմութեամբ լուսանկարուելու և աւելի ճոխութեամբ :

Գարլա Սերէնա 1873ին սկսաւ իւր ճանապարհորդութիւնքը , այց ելնելով վիէննայի Աշխարհահանդիսին , որ իրեն նիւթ տուաւ գրել այն Աշտորիական քույրերը , զորոնք փրանկիսկոս կայսրն իւր առանձին գրատանը համար ընդունեցաւ : Ետմին 1874 Գ. Սերէնա գնաց 'ի Սիդըհոլմ , ուր ուրիշ գահակալ մը , Օսկար Բ , զինքը մասնաւոր պատուով ընդունեցաւ , իւր ձեռքը գծելով Շուէտի և Նորվեկիոյ ճանապարհացոյց մը , և մի և նոյն ժամանակ տալով իրեն թուղթ յանձնարարական առ ամենայն բարձրաստիճան անձինս : Այն ճանապարհորդութեան արդիւնք՝ Սքանտինաւաեան քղերէն եղան , որոց համար Դպրոշքեան և արուեստից ընկերութենէն ոսկի միտալի արժանի եղաւ : Ապա այց եղաւ Ռուսիոյ , Թուրքիոյ , Սուրբ Երկրին , Սինգերիոյ , Լիբանանու և Յունաստանի : Այս վերջի երկրին մէջ ,

զոր ինքն նկարագրեց իւր Հելլենական քղոց մէջ , Գէորգ Թագաւորէն սիրալիր մտերմութեամբ ընդունուեցաւ , և յորիորդաց ուսուցանելու ընկերութեան պատուաւոր անդամ անուանուեցաւ :

Ետով անցաւ 'ի Կովկաս , Հօն երկու տարի մնաց , քննեց Կասպից և Սև ծովուն միջոցի հեռաւոր ժողովրդոց բարքը և կենցաղը , և զանոնք նկարագրեց վերոյիշեալ ընդարձակ մատենին մէջ : Մինչդեռ ինքն այն գաւառաց մէջ կը գտնուէր , սկսաւ Ռուսիոյ և Տաճկաստանի պատերազմն : Այս անակնկալ արկածս բոլորովին արիացուց զԳարլա , և այնպիսի քաջութեան և անձնուրացութեան գործեր կատարեց , որոնց համար Աղլեքսանդր Բ կայսրն և Միքայէլ Արշիդուքսն եռանդուն երախտագրութեան շնորհակալութիւններ մատուցին իրեն : Նոյն ժամանակը հիւանդացաւ , և չկարենալով դառնալ 'ի հայրենիս , քանի մը բարեկամաց խորհրդովն գնաց 'ի Պարսկաստան : Հասաւ 'ի Դեհլի և Հօն ձմերեց , և ապա դարձեալ անցաւ Վոլկայի և Կասպից ծովուն եզերքը , միջամուկս եղաւ Գալմուխներուն աւանը , Լամայի կամ մեծ քահանային տունը ասպնջականելով , որ իւր օրհնութիւնը տուաւ իրեն :

Այլ և ոչ հօս կանգ առին իւր քայլերն : Գարլա Սերէնա անցաւ 'ի Մոսկուա , այց եղաւ կայսեր , ապա գնաց վիէննա , ուր Աշխարհագրական ընկերութէն ընդունեցաւ թղթակից անդամոյ վկայագիրը , ինչպէս նաև 'ի Բարիդ , որուն Աշխարհագրական ընկերութեան մէջ ճառախօսութիւն մ'ըրաւ , որ զինքն արժանի ըրաւ թղթակից անդամ տիտղոսին :

Հրաւրեալ ապա Լիզպոնայի մարդաբանական ժողովէն , այց եղաւ Բորզուգայի և բազում քաղաքաց Սպանիոյ : Հասնելով 'ի Մատրիտ՝ Թագաւորական ընտանիքէն մեծամեծ արկնաբով ընդունուեցաւ : Ետաշխարհագրական ժողովըն Մատրիտի տիկինն Սերէնա գաղղիերէն լեզուաւ ճառ մը խօսեցաւ : ճանապարհորդած երկիրներուն բաւուց , սովորութեանց , օրինաց , և կազ-

մութեանը վրայ : Այս ճառախօսու-
թիւնն ալ իւր փառքն, և ևս պայծառ-
ցուց :

Բայց ի վերոյիշեալ երկասիրութեանց,
այս տիկնոջ զրէն ելան գրուածքն Պալ-
դիկ Տովէն միկն և ցկաւպից, հրատարա-
կեալ ի Տրէյֆուէ, և Էշրապուշի մը 'ի
Պարսա, նուիրեալ առ դշտոյն իտալիոյ
Գարլա Սերէնոյի-Քալմուշիւս անուամբ
երկասիրութեան յառաջաբանը՝ Գաղ-
ղիոյ Հասարակապետութեան երբեմն
արտաքին գործոց պաշտօնեայն՝ Պար-
թէլլամի Սէնդ Հիւեր գրեց :

Տիկինն Գարլա Սերէնա իրեն ճա-
նապարհորդութիւնն 'ի Կովկաս գրոց
մէջ սուր քննիչ է, աչքէն բան մը չի վրի-
պիր : Ուրիշ յատկութիւն մ'ալ՝ ըն-
տրութեան տալանդն է, որով զիտէ թէ
որն 'ի բաց պիտի թողու և որն կարեւոր
է գիտութեան և հետաքննութեան : Իւր
պատմութեանը մէջ ոչ ամազոն է և ոչ
այրասիրտ, բայց կին — եպական և ան-
երկիւղ հանճարով — բայց միշտ կին :
Բոլորովին հեռու վիպասանական դէպ-
քեր պատմելէ, ինչպէս օմանք 'ի ճանա-
պարհորդաց, առանց դժուարութեան
կը պատմէ երբ վտանգաց մէջ վրայ կը
հասնի՝ իր սովորականէն դուրս՝ երկիւ-
ղէն : Երբ հասնելով 'ի Կովկաս առա-
ջին անգամ, կը զգայ որ հծած է ձին
ծովափունքը ձեռն բարձրութեանց մէջ
կը լողայ, կը վախնայ, և պարզաբար
կը խոստովանի, որ «իմ՝ ձիաւոր քա-
ջասիրտ ուղեկիցներս վրաս կը ծի-
ծաղէին, վասն զի կ'երեկ թէ չէին իմա-
նար երկիւղին ինչ բան ըլլալը» : Նշա-
նաւոր նախատիպ օրինակ մ'է այս տի-
կինս, որ իր անձին զարդարանաց ա-
ռուակ մը հոյեիկ կ'ընէ, և ծարաւի հե-
տադոտութեանց և գիտութեան, կը
խոյստայ այն Կովկասին մէջ՝ որ մարդ-
կութեան խանձարութիւն կը կարծուի,
և ուր սուրբ Գիրք և Գիցաբանութիւն
մեզի կը ցուցնեն զայն : առաջինն՝ Թա-
բեթայ որդիքն՝ որոնք պանդխտեցան
այն բարձրութիւններէն՝ եւրոպական
սպիտակ ցեղը ծաւալելու համար. —
և միւսն Պրոմեթէա՝ կապեալ շղթայիւր

յՈրամազդէ ժայռին վրայ, յօդուտ
մարդկութեան յերկնից հուրն յափը-
տակելուն համար :

Պրոմեթէասի վրայ տիկինն Սերէնա
հետաքննին դէպք մը կը պատմէ, թէ
ինչպէս դիպարանական առասպելն դեռ
այն գաւառաց ժողովրդեան մէջ ան-
արատ մնացած է : Քրոմի անուանեալ
ժայռն, ըստ աւանդութեան ժողովրդ-
դեան այն ժայռն է՝ որու վրայ Պրոմեթէա
շղթայիւր կապեցաւ և ընարդը անդը
մը գիշատեց : Տեղւոյն պարզամտ Ժո-
ղովորդն այս յափշտակիլ թուշնոյն դէմ
սրտին մէջ միշտ ատելութիւն մը կը սնու-
ցանէ, և երբ կարենայ քանի մը հաս-
սպաննել, զինքը երջանիկ կը համարի :

Գարլա Սերէնայի ոճն դուրասան է,
երազոտ և պայծառ է : Որչափ հռչա-
կուած և խոսուած է վրացի գեղեցկու-
թեանց վրայ . . . Եւ ահա ինքնքանի մը
բառերով զանոնք կը նկարագրէ. «Վը-
րացի գեղեցկուհին ուրիշ բան չէ՝ բայց
թուշական ճանճ, զուռագոյն մարմնով
չքնաղ թիթեռնիկ, այլ առանց իմացա-
կանութեան : Իրեն կենաց մէջ դաս-
տիարակութիւնն շատ քիչ տեղի ունի :
սիրել, շողփաղփել, պարել, բոլոր իւր
կեանքն այս է » :

Ինչպիսի պարզութեամբ կը խօսի
մեր հեղինակն կովկասեանց բարեկեն-
դանին վրայ . կը ցուցնէ որ այն կոչ-
նականքն կը խմեն ու կը խմեն, և ոչ
երբեք կ'արբենան : — կը պատմէ
զուարթամտութեամբ թէ ինչպէս այն
ժողովրդոց վրայ կենդանութեան բա-
ժակաց օտարաբարոյ կատաղութիւնն
տիրած է, զորս կանոնաւորելու համար՝
իւրաքանչիւր կոյունքին զլխաւոր մը
կ'ընտրուի, այսինքն է նախագահ մը,
կենդանութեան բաժակաց, Այս նա-
խագահին (դարումպալ) անպայման
իշխանութիւն կը տրուի, և եթէ մէկն
իրեն սկնարկելուն բաժակը չքած, նա
կարող է արտաքսել զնա 'ի սեղանա-
տունէն, և թափել զլխուն վրայ բա-
ժակին մէջ մնացած գինին, զոր նա
չէ ուզեր խմել : Ի վերջ սեղանոյն նա-
խագահն կ'օրհնէ այն տունը : Կովկա-

սու պարերուն նկարագրութեան մէջ, կը նշանակէ Սերէնա՝ թէ անոնք Պարսկաստանէն առնուած են, միայն քիչ մը փոխուած այն լեռնականներէն : Սակայն կ'ըսէ ինքն, որ լեզուիկը պարբն, ինչպէս որ սովորաբար 'ի գործ կը դրուի, ինքն իրեն բանաստեղծութիւն մ'է : Բոլոր շարժումներ և թերութեք ե-

րերումներ են, որուն երաժշտութիւնը նոյն ինքն հանդիստեղծը զարնեն ձեռքերն ին միակերպ չափակցութեամբ : Սերէնա տիկնոջ կողմէն մատենան հաւանորէն սպառաշուն հետ իր անունը պիտի կապէ : յիշատակարան մը պիտի ըլլայ՝ որ ինքն իր ձեռքը կանգնեց :

ՎՍՃԱՍՈՒԿԱՎՈՆՈՒԹԻՒՆ ԿԱՐՄԻՐ ԾՈՎՈՒ

Տե՛ս Մոնտ պարերական թերթին վաճառականութեան և ճարտարութեքաղաքական հանդիսին մէջ՝ հետեւեալ տեղեկութիւնք կը գրէ Մաքս Հոֆման : Հին առնէ կարմիր ծովուն վաճառականութիւնն գրեթէ Միջերկրականին հաւասար բարեբաղդ և ծաղկած էր : Պտղովմեանց ժամանակը յափունս կարմիր ծովուն կային շատ շքեղ քաղաքք, որք մնացին նաև Հոսովմայեցոց տիւրապետութեան ժամանակ : Երբ Արաբացիք իշխեցին եղիպտոսի, դադրեցան ամենայն բարգաւաճանք : Շատ դարերէ ետքը, յաղորեցան վենետիկցիք կարմիր ծովուն ճանապարհաւ Հնդկաց վաճառականութիւնը եղիպտոսի վրայօք ընել : Բայց երբ Բորգուգայցիք Բարեյուսոյ Գլխոյն չորս կողմը պտըտող ուղին գտան, դադրեցաւ այն վաճառականութիւնն, և երկար ժամանակ տուրևառիկ նաւք չկտրեցին կարմիր ծովը :

Մուհամմէտ — Սաիտի գահակալութիւնն՝ արթնցուց այն դաւառաց առևտրական կենդանութիւնը : Այն իշխանն պատրաստեցաւ արգեամբք կատարել այնքան ժամանակաց երազը, նոր ճամբայ մը բանալով Հնդկաց բերքը կարմիր ծովով ղրկելու, և իսմայէլ խըտիլն զօրեղապէս օգնեց 'ի կատարումն մեծագործ ձեռնարկութեանն, — Սիւէզի ջրանցքին, — որուն անունը՝ Ֆէրտիմանտոյ Լեասերսի անունն հետ պնդապէս կապուած է : Այն տոնէնէն մինչև ցարդ օր առուր երթալով աւելի

բարգաւաճեցաւ վաճառականութիւնն և անդադար ալ կ'առաւելուն համեմատութիւնն, որ մեր յետագայից պիտի յիշեցնեն արդի ժամանակին մեծամեծ արարուածքը : Ոչ միայն կարմիր ծովէն Հնդկաց տեղափոխութիւնն երթալով միշտ աւելցաւ, այլ նաև բազմաշաղկապ փոփոխումներ, նոր ճանապարհին ծովային ափունքն տեսան Արևելից և Արևմտից ժողովրդոց հետ յարաբերութեանց յառաջ եկած բարիքը :

Կարմիր ծովն, 'ի Սիւէզէ և 'ի Պապէլ — Մանտեպէ, 2140 քիլոմետր երկայնութիւն մը, և 14 քիլոմետր միջին լայնութիւն մ'ունի : Ի հիւսիսակողմն կը փչէ հիւսիսոյ հողմն. ընդհակառակն 'ի հարաւ՝ փոփոխական դառնոյն մէջ է. հօն յապրիլէ 'ի դեկտեմբեր հիւսիս — արևելեան հողմն կը փչէ, և տարւոյն ուրիշ ամսոց մէջ հարաւ — արևմտեան կամ հարաւային հողմն :

Բաց 'ի կարմիր ծովը յաճախող աւանայն ազգայն նաւերէն, կ'անցնին կանոնաւոր կերպով Սիւէզի ջրանցքէն մեծամեծ նաւք, Բենիկսայէր Էնտ Օրիէն, դալ սոյն Էնտ Պէնիկսայ սոյնի Գոմբանի, Մէսաթրի Էնտիսուսայ և Գոմբանիս Արիօի Էնտերութեանց : Առաջին երեք ընկերութիւնք քանի մը ժամ միայն կը կենան 'ի Սիւէզ և յԱլէն, և հաղորդակցութիւն մը չունին ծովափանց բնակչաց հետ : Ընդհակառակն Արիօի Էնտ նաւք նաւահանգստից մեծապոյն